



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՅՈՒՆՊՐՈՖ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՀՐԴԵՅԱՑԻ
ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

A $\frac{F}{4301}$

ԳԻՒՅ 25 ԿՈՂ.



ԽԵՏՎԱՆԱ

1933

ՅԵՐԵՎԱՆ

Պատ. յել լեզվ. խմբագիր՝ Թ. Ա. Բայջան
Թարգմանիչ՝ Գրաքիոս
Տեխն. խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրեց՝ Գար. Հակոբյան
Հանձնված ե արտադրության 28 մայիսի 1933 թ.
Ստորագրված ե տպելու 16 հուլիսի 1933 թ.

Պետերասի տպարան, Գլավլիտ 8149 (թ), պատուեր 1311
Հրատ. 2579, տիրաժ՝ 2000.

**ՄՈՐԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ
ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հրդեհների թվի անընդհատ աճումը ստիպում և
մեզ վոչ միայն հատուկ ուշաղրությամբ վերաբերվել
դիպի մասսայական հականրդեհային աշխատանքը, այլև
հրդեհների դեմ մղած պայքարում հասարակական
մասնակցությունը վերածել հականրդեհային արշավի,
վորի մեջ հսկաբական դեր պետք ե խաղան մեր մա-
նուկները — պիտներներն ու աշակերտությունը։ Դըժ-
րախտաբար հրդեհաշեջ կազմակերպությունները հա-
ճախ միանգամայն անտարբեր են դեպի մանուկների
մեջ տարփող հականրդեհային աշխատանքը և դեպի
հրդեհային վտանգի դեմ ակտիվ մարտնչողների շար-
քերը սոցիալիստական հասարակության աղաղա ան-
դամներին ներգրավելու գործը։

Հրդեհաշեջ լուրաքանչյուր աշխատող պետք ե հի-
շի, վոր հրդեհների դեմ մղած պայքարը դրական
արդյունքներ կատա միայն այն դեպքում, ինը ալդ
պայքարը կառուցված լինելով թե մեծահասակ և թե
մանկահասակ ամբողջ բնակչության մասնակցությամբ,
մացված լինի բոլոր հասարակական կազմակերպություն-
ների առորյա աշխատանքի մեջ և նրան ներգրավված
լինի մեր աճող սերունդը։

Հականրդեհային աշխատանքը մանուկների մեջ

թելադրվում ե նույնպես նաև նրանով, վոր վեջերս կը ը-
կին աճել ե մանուկների հանցանքով՝ առաջացած հըր-
դեհների թիվը և, բացի մեծահասակների հետ տարգող
բացատրական աշխատանքից ու սի շարք կազմակերպ-
չական միջոցառումներից (մանկամսուրներ, մանկական
հրապարակներ, մանկապարտեղներ և այլն), այդ լե-
ռեռույթի դեմ պայքարը պետք է մղվի հենց մանուկ-
ների հետ տարգող դաստիրակշական ու պրոպագան-
դիստական աշխատանքի միջոցով մորիւխացիայի յեն-
թարկելով մանկական ակտիվությունը հրդեհային
վտանգի դեմ, կազմակերպելով մանկական հականրդե-
հալին հասարակական կարծիք։ Անկասկած, այդ աշ-
խատանքն առաջին հերթին պետք է կառո ցվի՝ ման-
կական հաստրակայնության, պիոներ ջոկատների,
դպրոցների, մանկատների, մանկական քաղաքիկների և
այլ հիմնարկների լնքնագործունեյության հիման վրա,
վորոնք իրենց հերթին հականրդեհային աշխատանք
կտանեն չկազմակերպված մանուկների մեջ։

Մանուկների հականրդեհային կազմակերպվածու-
թյունը նրանց հականրդեհային գրագիտության ան-
հրաժեշտությունը բղխում ե նաև հրդեհային աղետնե-
րի ալն դեպքերից, վորոնց հետևանքով քիչ զոհեր չեն
տալիս նաև մանուկները։ Մենք այստեղ կը երենք
միայն դժբախտության մի որինսկ, վոր տեղի լեռնե-
ցել վերջին ժամանակներս և տակավին լալն չափով
չի լույսաբանվել մամուլում։ Այդ պատահել ե Խարկո-
վի 14-րդ աշխատանքային դպրոցում։

Դպրոցի շրջանավարտման առթիվ պիոներները
կազմակերպել եյին յերեկույթ։ Տղաները ձեռք բերին
շարժական կինո, դրեցին այն սեղանի վրա, վորի տակ

գրեցին ուսուատաը, վորպեսդի մթության մեջ մեկն ու մեկը վոտքով չզիպչի ուսուատին, և սկսեցին ցուցադրել նկարը։ Ապարատի մոտ աշխատում եյին 15—17 տարեկան տղաներ։ Կինո-մեխանիկ մանկավարժը լեկավ սեանսի սկզբին, վորոշ ցուցումներ տվեց ու հեռացավ. քացակայում եր նաև դպրոցի վարիչը, իսկ նրա ողնականը նստած եր իր առանձնասենյակում։ Այսպես տեղի ունեցավ յերեկույթի կազմակերպչական կողմը, յերեկույթ, վորին հավաքվել ելին 400—500 յերեխա։ Յեկելե ելին յերեխաները և ուրիշ դպրոցներից, կալին և փոքրիկներ, վորոնք իրենց հետ բերել եյին դեռահասները։ Մեծահասակներ համարված չկային։

Դպրոցը տեղավորված եր յերեք հարկանի շենքում յերկու մուտքով (մեկը փակված եր, վորովհետև այնտեղ դրված եր հաղուստեղենի համար կախարանը)։ Հակառակ կանոնների, կինոֆիլմի ցուցադրումը տեղի յեր ունենում յերրորդ հարկում։ Վորտեղ կար միայն մի մուտք։ Սեանսը շատ ուշացավ և տեսց մինչև յերեկոյան ժամը 10-ից անց 30 րոպե։

Պատանի «կինո-մեխանիկների» ցուցմունքով ֆիլմի ցուցադրության ժամանակ ժապավենը կտրվում է, և նրա ծայրն ընկնում և սեղանի տակ գտնվող շիկացած՝ ուսուատի վրա։ Ժապավենը բոցավառվում է, բոցը բանում և սեղանը և արտացոլվում եկրանի վրա։ Մեկը գոտում և «հրդեհ», և ահա մթության մեջ յերեխաների ամբողջ մասսան խուճապով բոնված նետվում և դեպի միակ յելքը, դեպի դուրս։ Յենթադրություն կա, վոր սանդղագլխին, դեպի յերեխորդ հարկը դարձան ժամանակ մեկը սալթաքել ընկել ե, և յերեխաներն

սկսել են իրար վրա թափվել, վորի հետևանքով
առաջացել ե «խցան»:

Ասում են, վոր շուտով լույսը տրված ե յեղել, սա-
կայն խումապն արդեն պատել եր բոլորին

Դպրոցի մոտերքում գտնվում եր հրդեհաշեջ մասը,
հերթապահը դիտարանում (կալանչալում), լսելով
աղեկտուր ձայներ ու ջարդվող ապակիների զնդոցը,
տագնապի, աղդանշան ե տալիս. Հրդեհի լույս չկար,
պատանի «կիրո-մեխանիկները» վայրկենապես իրենք
հանգցրել ելին կրակը. Հրդեհաշաջների մի մասը
լույսամուտից Յ. ըդ հարկն ե բարձրացել, իսկ մյուս՝ մա-
սը նետվել ե դեպի «խցանը» ներքեռմ լելքի մոտ, և
սկսել ե փրկել յերեխաներին, վերցնելով նրանց իրար
վրալից:

Այդ աշխատանքը հաջողվեց կատարել չափաղանց
արտգ վրա հասած ժիշտցիալի ողնությամբ:

Դպրոցի լերկու մանկավարժը և պիոներ-կոլվարը,
վոր թուզլ ելին տվել այդ չափ հանցագործ վերաբեր-
մունք դեպի կինո-սեանսի կազմակերպումը, դատի-
տրվեցին և կրեցին իրենց արժանի պատիժը:

Այս պատահարը չափաղանց պերճախոս որինակ ե.
յեթի տղաների մեջ լինելին այնպիսիները, վորոնք
ծանոթ լինելին հականրդեհային կանոններին, նրանք
թուզլ չելին տա հասակավոր դեկավարներին նման
հանցագործ վերաբերմունք, թուզլ չելին տա, վոր այդ
չափ շատ լերեխաներ կուտակվեն մի շենքում, վորը
չուներ բավակն քանակով լելքեր: Ցեվ հենց իրենք՝
պատանի հանդիսականները չելին գտնվի նման զրու-
թյան մեջ, յեթե նրանց մեջ լինելին այնպիսիները,
վորոնք խումապին կհակադրեյին մի վորոշ կազմա-
կերպվածություն:

Այս բոլորը վկայում են այն մտսի՛, վոր բացարձակապես անհրաժեշտ եւ սանուէկների մեջ արմատացնել հականը դեհալիին կուլտուրան, ծանոթացնել նրանց հականը գեհալիին կանոններին, տարածել, սովորեցնել սառնասրտություն ու տոկունություն և կազմակերպվածություն, վոր անհրաժեշտ են պահպանել հրդեհի ու խուճապի ժամանակ:

ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԵՐ ՈԳՆԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ

Պատմենք լերկու դեպքի մասին, լերը, շնորհիվ իրենց ճարտարութլան ու հնարամտութլան, պիռներներն ու դպրոցական աշակերտները կանխել են չափաղանց մեծ աղետներ:

Դուլուրինսկայա դյուզում (Ստալինգրադի ռայոն) չքափորուհի Մոխովայի խշճիթում հրդեհ առաջացավ: Դրուժիննիկներն ու շացան, վորովհետեւ նրանք ձիեր չունեցին և ստիպված ելին հրդեհաշեջ խողովակը քաշել շտրակով, և ազա սալլակին լծել... մի լեզ, վորին պատահարար նրանք հանդիպեցին ճանապարհն: Մինչ այդ, խրճիթի տանիքն արդեն ալրվել եր, և բոցավառվել ելին առաստաղն ու գերաններից պատրաստած պատերը: Ազնության հասան էենինի անվան ջակատի լերկու պիռները: Տեսնելով Մոխովայա ընտանիքի անողնական դրությունը, նրանք վազեցին դեպի յեկեղեցին և սկսեցին տագնապի զանգեր-տալով հասան գլուղացիները արագ փոխադրեցին հրդեհաշեջ մեքենան և չթողին, վոր կրակը տարածվի մյուս շենքերի վրա:

Մի այլ դեպք. մի անգամ կեսորին աշակերտները Ցելիդավետինո գլուղում (նախկին Սարատովի

շրջան) տապկնոցի եյին խաղում։ Գնացին թագնվելու։ Դուրս յեկան խրճիթի լետվը և տեսան, վոր տների լետվին, մյուս փողոցում՝ հրդեհ կա, և բոցն արդեն բարձրանում ե խրճիթներից բարձր։ Տղաները վազեցին դեպի հրդեհի վայրը և ճանապարհին գոռում եյին՝ «հրդեհ» հրդեհ, ոգնություն...» Դյուղացիները լսելով նրանց գոռոցը, դուրս վազեցին փողոց և դույլերով։ Ակսեցին ջուր հասցնել։ Շուտով կրակն արդեն հանդցրին, այրվեց միայն տանիքը։ Հրդեհը նկատող տղաները նույնպես չելին կանգնել ձեռքները ծալած։ Նրանք ջուր եյին կրում, դույլերը ձեռքից-ձեռք տալիս և ջուր ելին լցնում տանքից ընկնող կրակի վրա։

Կարելի յե բազմաթիվ այլ որինակներ բերել, յերբ յերեխաները կանխել են հրդեհները, ստիպել են իրենց ծնողներին պատշաճ ուշադրությամբ վերաբերվել դեպի հրդեհային վտանգը, կրակը յերվալուն պես ցույց են տվել առաջին ոգնությունը, հաղորդել են հրդեհային հսկողությանը՝ ձեռնարկություններում, տներում, թատրոններում, ակումբներում և այլն՝ հրդեհային անվատանգության կանոնների խախտման մասին։

Հրդեհների դեմ մղվող պայքարին անհրաժեշտ են ներգրավել յերեխաներին, մանավանդ՝ պիոներներին ու աշակերտությանը, հարկավոր ե ստեղծել «պատանի հրդեհաշեջների», «հրդեհաշեջ պաշտպանության աջակցության» խերակներ, հարկավոր ե հասնել նրան, վոր լուրաքանչյուր կամավորական հրդեհաշեջ դրուժինա (խումբ) իրեն կից ունենա պատանի հրդեհաշեջների լավ կազմակերպված ջոկատ։

Պիոներների հրդեհաշեջ խմբակներն ամենասերտ

կապ ևն պահպանում հրդեհաշեջ կտղմակերպութլուն
ների հետ Այն վայրերու է, վորտեղ կան կամավորա-
կան դրուժինաներին կից պատանի հրդեհաշեջների
ջոկատներ, այդպիսի խմբակների անդամները պետք ե
մտնեն ալդ ջոկատների մեջ, ալցելեն հրդեհաշեջ
խմբերի ու դրուժինաների վարժութլուններն ու մա-
նլովրանները:

Տղաները միշտ մեծ հետաքրքրություն են ցույց տա-
լիս հրդեհաշեջների աշխատանքին, վորը պահանջում ե
մեծ ճարպիկություն, խիղախություն և արիություն,
ու չափաղանց գրավիչ ե.

Հրդեհաշեջների հետ կենդանի կապ հաստատելու
նպատակով՝ պիոներ - կտղմակերպությունների հա-
մար ոգտակար ե հրդեհաշեջ կազմակերպութլունների
հետ կնքել «բարեկամությն պայմանագրեր» Հրդեհա-
շեջ մասելք քաղաքներում, գլուղերում և ձեռնարկու-
թլուններում պետք ե հրդեհալիին գործը սովորեցնեն
պիոներներին, վորոնք իրենց կողմից կարող են
նրանց ոգնել կուտուր - լուսավորական աշխատանքի
զարգացման մեջ. Հրդեհաշեջների կլանքը (մանավանդ
քաղաքային հրդեհաշեջ խմբերում) չափաղանց միա-
պաղաղ եւ իսկ ալիոներները կարող են կազմակերպել
ինքնագործունելութիւններ, ներկալացում-
ներ տալ, կազմակերպել կամպանիաներ, մրցակցու-
թյուններ և այլն:

Իսկ ինչպիսի ոգնություն կարող են ցույց տալ
ողիոներները հրդեհաների ժամանակ: Դավառային փոքր
քաղաքներում (և մանավանդ գլուղերում) հրդեհների
ժամանակ տեղի լի ունենում անասելի իրարանցում:
Պարապ - սարապները խանգարում են հրդեհաշեջների

աշխատանքը և աջակցում են խուճապի զարգացմանը։
Շատ հաճախ հրդեհնալների՝ կրակից աղատած տնա-
լին իրերն ու գույքը հափշտակվում ու գրղացվում
են։ Պատահում են նաև, վոր հրդեհի շիջումը դանդա-
ղում և ջուր չլինելու պատճառով։ Բացի դրանից,
հրդեհաշեջները, վորոնք պետք են, ինչ գնով ել վոր
լինի, մարեն բոցը, ժամանակ չեն ունենում ջուր լցնե-
լու հրդեհից թափված կրակի վրա, հետվելու, վոր
հարեան շենքերը չբռնկվեն և այլն։

Պիոներները հրդեհի վայրը գալով, պետք և հրդեհի
շուրջը պոստեր զնեն, հետվեն քամուց ցըվող կրակին,
այրվող ծղոտի փնջերին և այդպիսիները նկատելուն
պես հանգցնեն դուլերի ջրով, ոգնեն հրդեհաշեջներին՝
մոտակա ջրհորներից, զետակներից, լճակներից ջուր
հայթալիթելու գործում, հետեւն կրակից աղատած զույ-
քի պահպանությանը և այլն։

Պարզ են, վոր պիոներների հրդեհաշեջ խմբակները
պետք են պատրաստված լինեն այդ աշխատանքին։
Ահա թե ինչու անհրաժեշտ ե կազմակերպել սեփական
«հրդեհաշեջ հավաքներ» տաղանալներ ու վարժական
մանյովրաներ՝ պատրաստվելու հրդեհի դեպքի համար։

ՀՐԴԵՀԱՅԻՆ ՎՏԱՆԳԻ ՆՇԱՆԱՐԱՐՆԵՐԸ

մի այլ վոչ պակաս կարևոր գործ, վորին կարող են
ձեռնամուխ լինել պիոներները, այդ հրդեհների կան-
խումն ե։ Պիոներների պարտականությունն ե՝ հիշեց-
նել մեծահասակներին հրդեհային վարանդի մասին,
վառարանների, ծխնելու գների ու ծխանցքների հաճա-
խակի զննելու, մաքրելու, նորոգելու անհրաժեշտու-
թյան մասին, կրակի հետ զգույշ վերաբերվելու, չոր

խոտի ու ծղստի մոտ չծխելու մասին, պիոները պետք է հիշեցնի, վոր անհրաժեշտ և հոգ տանել հրդեհաշեջ գումակի սարքինության մասին և կատարել հակառ հրդեհային ալլ կանոնները:

«Պատանի հրդեհաշեջների խմբակները» կամ «հրդեհաշեջ պաշտպանության աջակցության խմբակները» կարելի յե կազմակերպել պիոներ ջողատներին կից՝ դպրոցներում, մանկատներում, մանկական հրապարակներում, պիոներական ակումբներում, ընակընկերություններում ու այլ վայրերում, վորտեղ միացված են 10 — 16 տարեկան հասակի յերեխաների ընդհանրապես՝ հակառարդեհային մանկական միավորությունները և պատականարմար և ստեղծել այն դեպքում, յերբ կա վոչ պակաս, քան 10 ցանկացող: Նման միավորության աշխատանքը պետք է ղեկավարեն ավագն ու նրա ողնականը, վորոնք ընտրվում են խմբակի ընդհանուր ժողովում: Նոր անդամների ընդունելությունը կատարվում և ընդհանուր ժողովի միջոցով:

Խմբակի աշխատանքներն արդյունավետ կլինեն այն դեպքում, յերբ խմբակում սահմանված է հաստատուն կարգ ու կանոն: Միավորության այն անդամներին, վորոնք յերեք ամսվա ընթացքում չեն հաճախում ժողովները, չեն մասնակցում աշխատանքներին և խախուսմ են կարգապահությունը, պետք և հեռացնել ընդհանուր ժողովը վորոշումով:

Յուրաքանչյուր խմբակ պետք է կազմակերպի և աստիճանաբար լրացնի իր հրդեհային ցուցահանդեսը, վորը պետք է մատչելի լինի բոլոր լերեխաների ու հասակավորների համար, վորոնք կամենում են այցելել այդ ցուցահանդեսը: Յուցահանդեսը կլինի հա-

կահրդեհալիին պրոպագանդի մի վայր և խմբական մաս-
սայական աշխատանքի մի տեսակ ամբիոն:

Ի՞նչ պիտի լինի նման հրդեհալիին ցուցահանդեսում:
Նախ՝ հենց իրենց, մանուկների ձեռքով պատրաս-
տած հրդեհածեց ավտոմեքենաների մողելներ (ավտո-
ջրհաններ, ավտո-սանդուղքներ, ավտո-աշտարակներ,
ավտո-փրփրածիններ և այլն), մոտոպոմպեր, ձեռքի
հրդեհաշեջ ջրհաններ, ձիաքարչ սալլակներ, սանդուղք-
ներ, հրդեհաշեջ գործիքներ, փրկարար ապարատներ,
հրդեհաշեջ կայտրանների շենքերի մակետներ, սպրինկ-
լերլան կառուցվածքներ (կրակի դիմացող), տանիքներ,
հրակալուն շենքեր, հրդեհապաշտպան պարիսպներ
(բրանդմառեր) և այլն: Անհրաժեշտ են նույնպես
հրդեհաշեջ կահավորման գծագրեր, նկարներ և լուսան-
կարներ:

Ապա՝ ցուցահանդեսներում պետք ե արտացոլված
լինեն հրդեհների պատճենները (քաղաքային, արդյուն-
աբերական ու գյուղական): Այդ բաժինը պետք ե
ներկայացված լինի պլակատներով, մակետներով ու
նկարներով: Հատուկ տեղ պետք ե այստեղ բռնեն
հրդեհ կամ պայթյուն առաջացնող կամ դրանց պատ-
ճառ դարձած առարկանները (և նրանց մոդելները):

Ցերորդ բաժինը, վոր ցուցահանդեսում պետք ե
աչքի ընկնող տեղ բռնի, հրդեհների կանխման բա-
ժինն ե. գարձյալ պլակատներով, նկարներով ու մա-
կետներով պետք ե ցուց տալ հրդեհները կանխելու
գոյություն ունեցող բոլոր միջոցները:

Չորրորդ բաժինն ե՝ պայքարը հրդեհների դեմ: Այս-
տեղ կարող են մտնել հրդեհները հանգցնելու բոլոր
միջոցներն ու լեղանակները, հրդեհաշեջ խմբերի ու

դրուժինաների աշխատանքը, հրդեհների ու հրդեհացների սպերատիվ մարտական աշխատանքի լուսանկարներն ու նկարները, նշանարպությունը, ջրամատակարարումը, հրդեհաշեջ պաշտպանության մեքենալացումն ու մոտորացումը, քիմիական հրաշիջումը և այլն:

Վերջապես, ցուցահանդեսի չափաղանց անհրաժեշտ բաժինն և կազմում հրդեհային գրականությունը:

Բաժինների այս թվարկումն անկասկած մոտավոր է, և, հետեղինետե, յերբ հավաքվում ու կուտակվում են նյութերը, ցուցահանդեսը կարելի յե վերտկազմել բաժանել լինթարաժինների, մանրամասնել և այլն:

Ի՞նչպես մենք մատնանշեցինք, ո պատանի հրդեհաշեջների խմբակից կամ «հրդեհային պաշտպանության աջակցության» խմբակից հիմնական խնդիրն և հրդեհային անդրադիտության վերացումը, հականրդեհային գիտելիքների տարածումը թե մանկահասակների և թե մեծահասակների մեջ և աջակցությունը հրդեհաշեջ կազմակերպություններին:

ՎԵՐԱՑՆԵՆՔ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Կանգ առնենք առաջին խնդրի վրա, այն և՝ հրդեհային անդրագիտության վերացման վրա: Խմբակը պետք է աեզրական հրդեհաշեջ կազմակել պություններից ստանա դասախոս և սկսի պարապմունքները (թեկուղ հնգորյակում մեկ անգամ) մոտավորապես հետեւլալ պլանով:

1) հրդեհներն ու հականրդեհային միջոցառումները (հրդեհների առաջացման ու կրակի արագ տարածման պատճառները, հրդեհների բաժանումը, հրդեհները պա-

տերազմի պայմաններում, կանխիչ միջոցները՝ հրդեհների առաջացման ու կրտկի արագ տարածման դեմ, հրդեհների վերացման միջոցներն ու լեղանակները, ապահովումը. ջրով, ջրմուղները, ճանապարհները, հրդեհային կազմակերպությունները, նշանարարությունը, սպրինկլերլան կառուցվածքներ)։

2) հրդեհներ շիջելու (հանգնելու) միջոցները, (մեխանիկական ու ձեռքի հրդեհաշեջ ջրահններ, ձեռքի քիմիական հրշեջներ, հրդեհաշեջ գործիք ու սարքավորում)։

3) հրդեհաշեջ նշանարարություն (հրդեհների մասին հայտնելու միջոցներ՝ դիտարան, հեռախոս, հատուկ հրդեհային-նշանարարական ելեքտրական սարքավորություններ)։

4) Հրդեհային տակտիկա (կազմակերպված շիջում, հրդեհաշեջ ոգնության դուրս գալը, հրդեհի հետախոռնություն, մարդկանց ու կենդանիների ազատելը, կրակի դեմ կռվելու միջոցների դասավորությունը, հրդեհի մեկուսացումն ու վերացումը, պահպանությունը հըդրդեհի ժամանակ)։

5) հրակայուն շինարարություն (հրակայուն) նյութեր պատերի համար, հրակայուն ծածկեր։

6) բժշկական առաջին ոգնությունը հրդեհներում առաջացած դժբաղդ դեպքերում (առաջին ոգնության միջոցներ, վնասվածներին ոգնություն ցույց տալու յեղանակներ, ոգնության կազմակերպում)։

7) հրդեհային պահպանության կազմակերպումը Խորհրդային միության մեջ (հրդեհային պահպանության նշանակությունը, հրդեհաշեջ տեխնիկայի դարձացումը, հասարակական պայքարը հրդեհների դեմ

կանխիչ ու պաշտպանողական հականրդեհալին միջնցառությունները).

8) հականրդեհային պրոպագանդը (քաղաքում, արդյունաբերական ձեռնարկություններում, կոլխոզում, սովխոզում, հականրդեհային արշավանքների կաղմակերպումը, մամուլի դերը, հականրդեհային պրոպագանդը մանուկների մեջ և այլն).

9) գործնական պարապմունքները (ծանոթացում ազդանշանների հետ, պարապմունքները հակածխալին ու հակաղաղալին գործիքներով, սանդուղքներով, փըրկարար գործիքներով, վարժություններ՝ ջրահաններով ու ձեռքի քիմիական հրշեջներով, ջարդող գործիքներով, եքսկուրսիաներ դեպի հրդեհաշեջ կաղմակերպությունները, ծանոթացում՝ հրդեհաշեջ խմբի աշխատանքի դուրս գալու, նրա ներքին կառուցվածքի, հրդեհաշեջների կենցաղի հետ և այլն:

«Պատանի հրդեհաշեջների խմբակի» լերկը որդ խնդիրն կ հականրդեհային գիտելիքներ տարածել մանուկների ու մեծահասակների մեջ, այսինքն՝ հականրդեհային մասսայական պրոպագանդը:

Հրդեհներն այնքան հաճախակի լին մեզանում, ոլխավորապես այն պատճկառով, վոր բնակչությունը տակալին, ամեն անշամ գիտակցորեն չի վերաբերվում դեպի հրդեհային վտանգը: «Գուցե հրդեհ չի լինի» հին ռուսական սովորություն՝ ամենավատ և ամենավտանգավոր վնասատուն եւ Բայց և այնպես հենց այդ «գուցեն» մենք լսում ենք վոչ միայն գյուղում, այլև քաղաքում: Յեվ մենք տեսնում ենք, վոր հրդեհների ճնշող մեծամասնությունը տեղի յեւ ունենում կրակի հետ անզգուշ վարվելուց: հրդեհների թվի իջեց-

ման համար չափազանց եյականն նշանակություն
ունեցող ամենապարզ միջոցառումների չպաշտպանումից
(որինակ՝ ծխնելուղնարի ու ծխանցքների մաքրումը
մըից: Ծխելն արագելել հրդեհալին տեսակետից
վտանգավոր վայրերում, քանի վոր ծխախոտի չհան-
գած մի մնացորդը կարող ե հրդեհել ամբողջ գործա-
րանը, անտառը, գլուղը և այլն:

Ահա, որինակ՝ թե ինչ կարող ե պատահել ծխնե-
լուղի անմաքրությունից. 1931 թվի հունիսի 1-ին
ցերեկվա ժամը 1-ին հրդեհ առաջացավ Պսկով քաղա-
քի տներից մնկում: Մինչև հրդեհաշեջների գալը՝
կրակն արդեռ բռնել եր 120 տուն, խիստ քամու
պատճառով կրակն արագ տարածվում եր, բռնելով նո-
րանոր տներ հարևան փողոցներում և մոտենալով
անտառանյութերի պահեստին, սպառնալով փայտի ու
հացի գործարաններին: Լենինգրադից ոգնության
հասան հրդեհաշեջները և միայն յերեկոյան ժամը 7-ին
հրդեհը փոքր ինչ մեղմացավ, իսկ հաջորդ որվա առավո-
տյան ժամը 8-ին քոլորովին հանգավ, Բոլորովին այր-
վեցին 75 փայտաշեն ու քարաշեն տուն, բակերում
լեղած այլեալ կառուցվածքների հետ միասին: Հըր-
դեհի պատճառն ե լեղել ծխնելուղի անմաքրությունը:


Մենք պետք ե անպայման հաստատենք հակահր-
դեհային կարգապահություն. պետք ե հասցնել այն-
պիսի կարգապահության, վոր հակահրդեհալին ան-
վտանգության լուրացանչյուր խախտող ամենախիստ
հակահարված ստանա ու դատապարտվի հասարակու-
թյան կողմից: Դրա համար անհրաժեշտ ե հակահր-
դեհային մասսայական պլրոպագանդը — խորհրդային
յերկրի ամբողջ բնակչությունը. մինչև մինչև փոքրը

պետք ե հասկանա, թե ինչպիսի վիթխարի սպառնաւիք և ժողովրդական տնտեսության ու սոցիալիստական շինարարության համար կրակը, պետք ե դիտենանրա վտանգավոր հատկությունները (կենցաղում, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, և լավ ծանոթ լինի հրդեհների առաջանալու պատճառներին և այն բանին, թե ինչ պետք ե անել, վոր հրդեհներ չլինեն:

ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պետք ե իմանա, թե ինչ անտեսելի ճեղքվածքներ են առաջանուած ժողովրդական տնտեսության մեջ հրդեհների հետևանքով։ Հրդեհը հարված ե սոցիալիստական շինարարության։ Ահա թե ինչու անհրաժեշտ է համառորեն պայքարել հրդեհի զեմ և ահա թե ինչու յե անհրաժեշտ մասսայական հակահրդեհալին աշխատանքը։

Խորհրդային Միության հրդեհային պաշտպանության պատանի բարեկամների և ողնականների ուղղակի պատվավոր պարտականությունն ե ամենուրեք անընդատ հիշեցնել հրդեհալին վտանգի մասին, պարզաբանել, թե ինչից են առաջանում հրդեհները և ինչպես պետք ե նրանց զեմ պայքար մղել (կանխիչ ու պաշտպանողական), ադիտացիա մղել հրդեհաշեջ դրուժինաներ կազմակերպելու, արդեն գոհություն ունեցող դրուժինաների մեջ մտնելու, լուրջ ու գիտակցորեն վերաբերվելու դեպի հրդեհային վտանգը և դեպի հրդեհալին պահպանության պահանջները։

Ահա թե ինչու յե անհրաժեշտ հակահրդեհալին պրոպագանդը,



ՀՐՁԻԳ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Մասսայական հականրդեհային պրոպագանդի չափազանց զգալի մասը պետք է լինի բացատրական աշխատանքը սանուկների մեջ։ Յերեխաներն են հաճախ հրդեհների պատճառ լինում, նրանք են հաճախ ակամա հրձիգները։ Յերեխաների հրձիգությունները հետեանք են մեծահասակների անփուլթ ու անկուլտուրական վերաբերմունքի՝ դեպի հրդեհային վտանգը, ինչպես այն բանի, վոր յերեխանները չեն իմանում և չեն հասկանում, թե ինչ վտանգավոր հետեավնքներ կարող ե ունենալ իրենց չարաճճիությունը և անզգուշ ու անհմուտ վերաբերմունքը դեպի կրակը։ Հին և, բայց շատ ճիշտ ե այն դարձվածքը, թե Վվատորինակը՝ վարակիչ ե։ Յերեխաները տեսնում են, վոր իրենց ծնողներն անփուլթ են դեպի հրդեհի հնարավորությունները, դեպի հականրդեհային միջոցառումները, և իրենք ել նույնպես են վարվում։

Միայն հականրդեհային պրոպագանդ մղելը մեծահասակների մեջ քիչ է, քիչ և նրանց բացատրել, թե պետք է յերեխաներին պահպանել կրակից, ինչպես պահպանում են քութեց, ծաղիկ կամ խոլերա հիվանդություններից, դեռ այդ քիչ ե, անհրաժեշտ ե նույնպես համառ ազիտացիա մղել հենց յերեխաների մեջ, պատմել նրանց, թե ինչո՞ւ չի կարելի խաղալ կրակի հետ, լուցկիներով, մեծերից ծածուկ ծխել վերնատներում ու ցախատներում, կրակ անել շենքերի մոտ, անտառում և այլն։ Հսկալական թվով հրդեհներ են առաջանում հատկապես հենց այդ պատճառներով։ ըստ վորում հրդեհները հաճախ վերջանում են յերեխաների

կորսատով, վորոնք, տեսնելով, վոր կը արակը տարած-
վում է, շփոթվում են, վախից մտնում են պահարան-
ները, մահակալների տակ և այլն. իսկ արդյունքը
լինում է այն, վոր հրդեհը ուշ և նկատվում, և, մինչեւ
հրդեհաշեջների դաւը. կրակն արդեն ալնպիսի մեծ
չափեր և լնողունում, վոր հաճախ հնարավոր չի լինում
այլա փրկել լերեխաներին:

Հրդեհաշեջների պատճի բարեկամների հակառը-
դեհային կոլտուրայի հաղորդիչների անմիջական պար-
տականությունն և բացատրել իրենց ընկերներին,
թե ինչպիս պետք և պաշտպանվել հրդեհներից:

Չի կարելի փոքր յերեխաներին տանը մենակ թող-
նել, չի կարելի թուլլ տալ, վոր նըրանք խաղան լուցկե-
ներով, ծածուկ ծխեն, կրակ, այն և՛ վառարան, սլրիմուս
զառեն և վորեն տեղ բաց կրակ գնեն (մոմ լուցկի,
լապտեր կամ լամպ՝ առանց ապակու):

ՀԱԿՈՂԴԵԼԱՅԻՆ ԱՐԴԱՎԸ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

Առանձնապես ողտակար, հետաքրքիր ու կարեոր
աշխատանք կարող են տանել պիոներական հրդեհաշեջ
խմբակներն ամտուը ճամբարում։ Այնտեղ յերեխանե-
րին վերապահելով ստեղծագործական նախաձեռնու-
թյունը, կարելի յե նըրանց հանձնարարել աշխատանք-
ների մոտավոր ծրագիր, վորը խմբակներն ի վիճակի
յին իրենք լրացնելու, փոփոխելու կամ կրծատելու։

Դեպի կոլխոզ, սովխոզ կամ գյուղ կատարած ամ-
րան հակառակեհային արշավի հիմնական խնդիրները
հանդում են հետեւյալին.

1) ծանոթանալ տեղական հրդեհաշեջ դրուժինայի
դրուժյանը (յեթե դրուժինա չկա՝ գյուղխորհրդի, կոլ-

իսողի կամ սովխողի վարչության միջոցով աշխատել կաղմակերպել ալղպիսին).

2) ծանոթանալ կոլխողի, սովխողի կամ գյուղի կողմից հակահրդեհալին միջոցառումների կատարմանը:

3) պարզել, թե վճրտեղ և ինչպես ե պահվում հրդեհաշեջ ինվեատար, զննել, ոգնել, յեթե հարկ կա, նրա վերանորոգմանը, միաժամանակ զննել հակահրդեհալին սրահը, աշխատել, վոր ալդտեղից հեռացվեն հրդեհաշեջ սարքավորման չվերաբերող առարկաները.

4. կա հավորական հրդեհաշեջ դրուժինալին կից կազմուկերպել պատանի հրդեհաշեջների ջոկատ և նրա դեկավարությանը ներգրավել կոմյերիտականության ներկայացուցչին. տեղական պիոներ ջոկատին կից ու դպրոցում կաղմակերպել հրդեհաշեջների խմբակ.

5. դեկուցում դնել կոմյերիտամիության տեղական բջիջում հրդեհային պաշտպանության մասին և աշխատել, վոր կոմյերիտակաները մասնակցեն հրդեհաշեջ դրուժինայի աշխատանքներին և ոգնեն հակահրդեհային միջոցառումների կիրառման գործում.

6. ստուգել ջրի, աղբյուրների դրությունը, մասնա՝ ողել ջր՝ սմբարների ու դեպի նրանց տանող հարմար ձանապարհների վերանորոգման աշխատանքներին.

7. աշխատել, վոր կազմակերպվեն մանկական մսուրներ, մանավանդ դաշտային աշխատանքների ժամանակ, վոր մեջնորդության մեծահասակներն անխնամ թողնեն յիրեխաներին.

8. ստուգել, թե արդյոք կիրառվում ե ձիերի հերթականությունը հրդեհի դեպքի համար, կմն արդյոք ցերեկվա ու գիշերային հրդեհային պահակներ և կամավոր հրդեհաշեջների հերթապահություններ.

9. Հալթալթել հակահրդեհային գրականություն
ու պլակատներ՝ տեղական խրճիթ-ընթերցարանին,
ակմբին, կարմիր անկանը, ժողտանը, կռոպերատիվ
թեարանին, և ալդ տեղերում ստուգել «հրդեհային
անկյունները».

10. Ներդրավել հասարակական կաղմակերպություններին ու կուլտաշխատողներին հակահրդեհային պլրոպագանդին ու աղիտացիալին՝ հրակայուն շինարարության ու հրդեհներից պաշտպանող ծառատունկերի համար, կազմակերպել յերեկույթ կոլխոզնիկների ու մանուկների համար, գնելով հակահրդեհային կենդանի լրագիր, կազմակերպելով հասարակական ցուցադրական դատի ինսցենիբովկա՝ հրձիգ կուլակի դեմ և այլն:

Ալդ, կրկնում ենք, աշխատանքների միայն մոտավոր ծրագիրն ե, վոր գաղափար ե տալիս պիոներների՝ գյուղում տանելիք ամբան կարեոր ու անհրաժեշտ աշխատանքի մասին:

Իսկ ի՞նչպես մղել հականրդեհային պրոպագանդը.—
Պրոպագանդի յեղանակները բազմաթիվ են, և մենք կմատնանշենք հրդեհաշեջների պատանի բարեկամների համար ամենից մատչելի յեղանակները:

Անհրաժեշտ է գումարել յերեխաների ժողովներ ու «հակահրդեհային միտինգներ», դնել զեկուցումներ, կարդալ զրքույկներ՝ հրդեհների ու հրդեհաշեջների մասին։ Նույնպիսի ժողովներ կարելի յե ունենալ մեծահասակների հետ միասին։ Մանկական հակահրդեհային ժողովներին ու միտինգներին հարկավոր է հրավիրել և ծնողներին։ Զեկուցողին միշտ ել կարելի յե կանչել հրդեհաշեջ կազմակերպություններից։

ՎՈՇ ՄԻ ՀՐԴԵԼ ՄԵՐ ՏԱՆԸ

Ուրինակի համար՝ պատմենք ոհակահրդեհալիքն սիտինգի մասին, վոր կազմակերպել եյին մի բնակարանային ընկերության յերեխաները։ Միտինգի կազմակերպիչները տան ամբողջ մանկահասակ ու մեծահասակ բնակչությանը հրավիրում ելին բակը, վորտեղ դասավորված եյին նստարաններ ու աթոռներ։ Կազմակերպիչներն անփոփի կերպով պատմում են, թե ինչու յեն նրանք միտինգ կազմակերպել, և զեկուցման համար խոսքը տալիս հրդեհալիքն աշխատողին։

Զեկուցողին լսում եյին մեծ հետաքրքրությամբ։ Մեծահասակներն ու յերեխանները տալիս եյին նրան բազմաթիվ հարցեր։ Պարզվեց, վոր ներկա յեղողներից քչերն են իմանում, թե մեծ հրդեհը կարող է առաջանալ ծխնելուզում մուրն այրվելուց, վոր կրակը կարող է աննկատելիորեն վառվել մի քանի որ և հետո հանկարծ բռնկվել, վոր հրդեհներ են լինում զանազան նյութերի ինքնայրումից, վոր մինչեիսկ կանթեղը շատ հաճախ հրդեհների պատճառ է դառնում։ Յեզ վոչ վոք չգիտեր այն մասին, թե ինչպես պետք է հրդեհը հանգցնել ձեռքի քիմիական հրշեջներով։

Չնայած նրան, վոր տանն ամեն տեղ կախած կալին հրշեջներ, վոչ վոքի մտքով չեր անցել կարդալ նրանց հետ վարվելու կանոնները։ Ավելի ևս՝ վոչ վոք չգիտեր, թե ինչպես պետք է կանչել հրդեհաշեջ խմբին, չգիտեր մոտակա հրդեհաշեջի խմբի հեռախոսի համարը։ Շատերը հավատում եյին այն անհեթեթ առասպեկտներին, թե հրդեհաշեջներին կարելի յե կանչել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, յերբ արդեն

իրոք չի կարելի սեփական միջոցներով հանդցնել հըբ-
դեհը, թե չե՞ հրդեհաշնջ խումբը կարող ե պահանջել
25 ոռուրի տուգանք:

Հրդեհային աշխատողը պատասխանում եր իրեն
տված հարցերին և մանրամասնորեն կանգ առավ հըբ-
դեհաշնջ խմբին կանչելու վրա: Նա պատմեց, վոր
հրդեհաշնջ խմբերը վոչ մի պարագայում գալու համար
փող չեն վերցնում և վոր հրդեհը նկատելուն պես՝
անհրաժեշտ ե անմիջապես կանչել հրդեհաշնջներին և
վոչ թե հուլս դնել իրենց ուժերի վրա, վորով ավելի լե
սաստկանում հրդեհը, սպառնալի չափեր ե ընդունում,
վորից հետո արդեն դժվարանում ե նրա դեմ պայքա-
րելը, նույնիսկ հրշեջ խմբի համար, իսկ հրդեհաշներն
իրոք պատասխանատվարյան են յենքարկում Երանց, ով-
ելու Երանց կանչում են առանց պատճառի՝ խուլիզանու-
րյունից, սրիկայուրյունից դրդված:

Ֆերբ զեկուցողն ավարտեց, սկսվեց բանավեճը:
Դուրս լեկան լերեխաները, ծնողները և միտինգ կազ-
մակերպողները: Հետեվանքը լեղավ յերկու բանաձե.
մեկը՝ մանկական, իսկ մյուսը՝ բոլոր ներկա յեղող թե
մնծառակների և թե մանուկների կողմից.

Առաջի բանաձեռնում առվածե.

«Մենք», կուլտուրական կլանքը բնակը ն-
կերության յերեխաներս խայտառակու-
թյունն ենք համարում մեր յերկը մեծ քա-
նակով հրդեհները:

Մենք կոչ ենք անում մեր ծնողնորին
կնքել մեզ հետ պայմանագիր՝ հրդեհների
դեմ պարագարն ուժեղացնելու և բոլոր հա-
կան հրդեհային միջոցառումները կիառելու

համար, պայմանագրի մեջ ճիշտ կմատնանը շվեն գլխավոր միջոցառումները, իսկ մենք մեր կողմից պարտավորվում ենք լինել հրդեհաշների բարեկամներն ու ոգնականները և մեր ուժերի ներածին չափթուլ չտալ հրդեհ առաջանալուն, խստիվ կատարելով այն, ինչ ասում են մեր ընկեր-հրդեհաշները:

Յերկրորդ բանաձեռւմ ասված ե.

«կուլտուրական կյանք բնակչներության ամբողջ բնակչությունն այսորվանից պարտավորվում ե կիրառել հականը դեհալին անվտանգության միջոցառումները և վերջիններիս ոգտին մղել լայն պրոպագանդ:

Բնակչներության վարչությունն ընտրում ե իր կազմից հրդեհալին յեռյակ՝ պատանի հրդեհաշների խմբակից հետ միասին շարունակ հսկելու տան հականը դրության մասին:

Ամբողջ տանը կախել պլակատներ՝ հականը հրդեհալին կանխիչ միջոցներով:

Վհչ մի հրդեհ մեր տանը՝ կը ակի հետ անդգուշ վերաբերվելուց ու:

ՏԱՏԱՆԻ ՀՐԴԵԱՇԵԶՆԵՐԻ ՏԱՄՅԱԿ ՆՈՐ ԽՄԲԱԿՆԵՐ

Մանուկների հետ տարգող հականը հային աշխատանքը մեծ հաջողություն ունի, վոր կարելի լե տես-

նել թեկուղ հենց Պուշկինիտն ռայոնի (Մոսկվայի մարդ) փող ծից Վերջերս այդ ռայոնում տեղի է բ ունեցել պիոներների մեծ հավաք:

Հավաքի որը բացվեց պիոներների հրդեհալին ցուցահանդեսը՝ Պիոներները մեծ հետաքրքրությամբ ելին դիտում ցուցահանդեսում ցուցադրված հոգահրդեհային զործիքները, հակահրդեհային պրոպագանդի բաժինը, դրականության վիտրինան, քիմիական հրաշիջման բաժինը, «ելեկտրականությունը» հրդեհների դեմ մըղած պայքարումն բաժինը և այլն, Յերեխաններն արդեն չելին բավականանում լոկ եքսպոնատների (ցուցադրած իրերի) դիտումով, այլ ձգտում եյին խորացնելու ճշտել իրենց գիտելիքները, տասնյակ բազմազան հարցեր տալով արդտեղ գտնվող «հրդեհային կոնսուլտացիային»:

«Պիոներների Պուշկինյան համառուսական հավաքը վողջունեց հրդեհային պահպանության հավաքական մարտական պատվիրակությանը: Փողալին ազգանշանների ու յերաժշտական խմբի նվազի տակ՝ հրդեհաշենքների պատվիրակությանը, վոր ներկայացել եր մարտական լիակատար համազգեստով, միաբերան վողջունեցին պատանիները»:

Վորոտընդուստ ծափերի տակ պատվիրակությունը հավաքին հաղորդեց հրշեցների բոցավառ վողջունը և հրտակարակվեց հետեւալ հրահանդը.

1. մեր ռայոնի բոլոր պիոներները պետք են մտնեն հակահրդեհային արշավագիշեցների մեջ և սոցիալիստական մրցության կանչեն միուս ռայոններին՝ արշավի ամենից հաջող կատարման համար:

2. բոլոր պիոներ-ջոկատներում, դպրոցներում, մանկատներում և այլն կազմակերպել «հրդեհաշեջների խմբակներ».

3. այն վայրերում, վորտեղ կանչ կամ մավորական հրդեհաշեջ դրուժինաներ, ստեղծել նրանց կից պատանի հրդեհաշեջների ջոկատներ.

4. նախահրդեհային պրոպագանդ մղել բոլոր մանուկների ու մեծահասակների մեջ, աշխատելով, վոր խստիվ պահպանվեն հակահրդեհային կանոնները, խնամքով վարվեն կրակի հետ, ապահովեն ջրով հրդեհի գեղքի համար և կոլխոզներում ու սովխոզներում կազմակերպեն մանկամուրներ, մանավանդ դաշտային աշխատանքների ժամանակ» (ձայներ՝ «Ճիշտ ե»):

5. բոլոր պիոներ-ջոկատներում, դըպրոցներում, մանկատներում, ակումբներում, կարմիր անկյուններում, խճիթընթերցարաններում և այլն կազմակերպել «հակահրդեհայինանկյուններենհրդեհային գրադարաններ»:

Պատվիրակությունը հավաքի հատուկ ուշադրությունն ե հրավիրում յերեխաների հանցանքով առաջցող հրդեհների աճող քանակի մրա:

Պիոներները, — ասում են ըահանգը, — պետք ե վերջ տան դրան: Նրանք պարտավոր են ամենուրեք հիշեցնել հրդեհի վտանգի մասին, այն հրկիզումների մասին, վոր

կատարում են դասակարգային թշնամին ել ը՝ հրդեհալին պաշտպանության ամբացման անհրաժեշտության մասին:

«Ծափահարություններ»

— «Մենք կոչ ենք անում ձեզ, մեր պատանի ընկերներ, յեղել հականը դեհալին ճկատը, լինել հրդեհների դեմ հուսալի պաշտպանություն և նրանց դեմ պարզաբնակերպիչներ ու պըռպագանդիստներ:

Ծափահարություններ. բացականչություններ՝ «կիեններ» և կղառնմներ»:

— «Պատանին պիոներներ, յեղեք հրդեհալին պաշտպանության ամբացման առաջամարտիկները, յեղեք հականը դեհալին ճակատի ակտիվ մարտիկները:

— «Պատանին կենինցիների դեմ պարզաբնակերպիչների միշտ յեղեք պատրաստած»:

— «Մենք միշտ պատրամատ ենք», Յեզ բարձրականչ ռուսանց յեղավ հրդեհաշեջների կոչի պատասխանը: Պիոներները բուռն ովացիա սարքեցին հրդեհաշեջների պատվիրակությանը:

Լսելով հրահանգը՝ հավաքը հանդիսավոր խոստում տվեց, կատարել այն ամենը, ինչ հրդեհային պաշտպանությունը կոչ ե անում պիոներներին:

— Մենք արդեն իսկ կատարում ենք հրդեհաշեջների հրամանը, հայտարարեցին ոայոնում «պատանի հրդեհաշեջների» առաջին խմբակի ներկայացուցիչները,

վոր կազմակերպված ելին ԿԱՅԱԿՄԱ գյուղում։ ՆՐԱՆՔ
զեկուցեցին հավաքին։

— Պատանի հրդեհաշեջների խմբակը կազմակեր-
պում և հականրդեհալին գրքուցիների ընթերցումներ,
վարում և պրոպագանդիստական աշխատանք, ողնում
և ռայոնական հրդեհային տեսչին, պայքար և սկսել
հրդեհային ջրամատակ օրարման համար, գրոհ և սկսել
թափթափած ծղոտների դեմ։

— Կեցցե ԿԱՅԱԿՄԱ պիոներների «Պատանի հրդե-
հաշեջների խմբակը», տալ «Պատանի հրշեջների տաս-
նյակ նոր խմբակներ» կոլխոզներին, գլուղերին, գործա-
րաններին, — պատասխանեց հավաքը։

Ռայոնի հրդեհային պահպանության ղրության մա-
սին հրդեհալին տեսչի զեկուցումից հետո հնչեց փող-
հարի ազդանշանը, իսկ պիոներների զորայուները
շարժվեցին ցուցիցի Թնդում եր պիոներների լերթա-
կան քայլերգը։ Զորայուներում ծածանվում եյին ալ-
կարմիր քաթաններ՝ լոգունգներով։

— Երեխաններ, միացեք հականրդեհային արագի,
զորայուներին։ Պահանջում ենք հասակավորներից,
խստիվ պահպանել հականրդեհային կանոնները։ — Պրի-
մուսը քազմաթիվ հրդեհների պատճառն ե. կորչեն
պրիմուսները։ — Հրդեհները հարված են հնգամլակի
դեմ։ — Ավտոմոբիլը հարված ե հրդեհների դեմ։ Մո-
տովոմայը լուրաքանչյուր կոլխոզին, լուրաքանչյուր
գլուղին, լուրաքանչյուր ձեռնարկության։

Կոլխոզներից յեկած պիոներները կրում եյին ալ-
պիսի պլակատներ։

— Հիշեցնք ծղոտաշեն գլուղի մասին։ — Հրակա-

յուն շինարարությանը լեղեք պատրաստ։ — Կոլխոզներին տվեք հականրդեհային շեմություն։

Ցուցաբարները կանգ առան հրապարակում, ուր շուտով յեկան ավտոմեքենալացված ու հեծյալ հրդեհաշեջ խմբերը։ Սկսվեցին հրդաշեջների մանլովըները, ցուցադրվեցին հրդեհաշեջ ավտոմոբիլի աշխատանքը, ձեռքի խողովակների աշխատանքը, կատարվեց քիմիական հրշեջների փորձը։ Վերջում անցկացվեց մասսայական հականրդեհային միտինգ, իսկ լերեկոյան տեղի ունեցավ «հրդեհային վիկտորինա»։

Պիոներները վստահորեն պատասխանում ելին այսպիսի հարցերին։

— ԽՍՀՄ տարեկան ինչքնն հրդեհն ե լինում. Ի՞նչ տարբերություն կա պրոֆեսիոնալ և կամավորական հրդեհաշեջների խմբերի մեջ. ի՞նչպես ե կառուցված ավտո-ջրհանը, ի՞նչպես պետք ե անի պատանի հրդեհաշեջ պիոները՝ ի՞նչպես պատրաստել արհեստական ջրամբար, ի՞նչ ոգուտ են տալիս ծառերը հրդեհների դեմ պաշտանության գործում։ Ի՞նչպես կովել կուլակալին-հրկիզումների դեմ, ի՞նչի՞ համար ե հրդեհաշեջ մոտորալին նավակը, ով ե հրկիզում մեր ֆարբիկները, կոլխոզները, ի՞նչից են առաջանում հրդեհները։

Դրանից հետո հավաքի բոլոր պատրամավորներին բաժանվեց հականրդեհային գրականություն և «կորչեն հրդեհները», թերթը ու մանուկները գնացին դիտելու «աննկատելի հերոսներ» կինոնկարը, վոր ցույց ե տալիս հրդեհաշեջների մարտական աշխատանքը։ Նկարը ցուցադրվում եր հրդեհային տեսչի բացատրություններով։ Յերբ վերջացավ կինոն, հրդեհային տեսուչը հիշեցրեց

հավաքին հրդեհների դեմ առաջիկա պայքարի մասին և ավարտեց իր ճառը հետեւայլ կոչով:

—Պատանի լենինցիներ, հնդամլակը կրակից պաշտպանելու, հրդեհների դեմ պայքարելու յեղեք պատրաստ:

—Մենք միշտ պատրաստ ենք, —խմբով պատասխանեց հավաքը և այդ պատասխանը ծածկվեց թմրուկների թնդունով, փողերի հնչուններով, ուռաններով ու բուռն ծափահարություններով:

Պիոներների ալդ զոդումը բանվոր հրդեհաշեջների հետ յերաշխիք և այն բանի, վոր հականրդեհային այն պատրաստությունը, վոր ստացան պիոներները հավաքում, ապարդյուն չի անցնի և յերկար ժամանակ կմնա նրանց հիշողության մեջ:

ՊԱՀՊԱՆԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՀՐԴԵԼՆԵՐԻՑ

Հականրդեհային արշավին մասնակցելու անհրաժեշտությունը, միլիոնավոր պրոլետարական յերեխաներին յերկրի հականրդեհային պաշտպանության ներգրավելու կարևորությունն սկսել են գիտակցել իրենք՝ մանկական կոմունիստական շարժման կազմակերպությունները։ Առաջին նախաձեռնությունն այդ ուղղությամբ արված և Մոսկվայի նախկին շրջանում։

Մենք չենք սխալվի, յեթե ասենք, վոր պիոներների շրջանային այդ կոնֆերանսն առաջին պիոներական կոնֆերանսն եր, վոր քննարկեց հականրդեհային նակատը յելնելու ուղիները։ Այդ պատճառով նա չբավականացավ շրջանի աշխատանքների մասին վորոշում ընդունելով, այլ իր բանաձեվում կոչ է

անում ԽՍՀՄ պիոներական բոլոր կազմակերություններին «Ակտիվ մասնակցություն ցույց տալ յերկրի հրդեհալին պաշտպանության ամբացման աջակցությանը»:

Այդ կոչը պետք է հասնի մանկական պրոլետարական ընտանիքի բոլոր անդամներին:

«Վերջերս, — ասված ե կոնֆերանսի վորոշման մեջ, — գլուղական վայրերում ավելացել ե հրդեհների թիվը: Աճում ե հրդեհների քանակը՝ կուլակալին հըրկիզումներից՝ կոլխոզներում, սովխոզներում ու գյուղերում: Քաղաքներում սպիտակդվարդիական վնասաբարները հըրկիզում են մեր ֆաբրիկներն ու գործարանները»

Պիոներական կազմակերպությունները պետք ե ամենաակտիվ մասնակցությունը ցույց տան հականրդեհալին արշավում, հրդեհների վատանգի դեմ մղվելիք պարում և հրդեհային պաշտպանության ամբացման գործում»:

Մայիսի 25-ից մինչև հունիսի 25-ը «հակահրդեհալին միամսյակը» անցկացնելու կառակցությամբ կոնֆերանսը վորոշեց, վոր

«Բոլոր պիոներական կազմակերպությունները պետք ե կապվեն ռայդործկոմներին կից՝ «հակահրդեհային միամսյակ» անցկացնելու ռայոնականշտարներինետ: «Միամսյակն» ավարտելուց հետո, պետք է մշտական կապ հաստատվի պիոներական կազմակերպությունների և ռայդոնական հրդե

հային - տեսուչների ու տեղական կամավորական հրդեհաշխատ կազմակերպությունների հետ

Պիոներական բոլոր կազմակերպություններում պետք ե ստեղծվեն «հրդեհային պաշտպանության աջակցության խմբակներ» կամ «հրդեհաշեջների բարեկամների խմբակներ», վորոնք ներգրավելով իրենց կազմի մեջ առավելագույն թվով պիոներների, պետք ե ծանոթանան տեղական հրդեհային պահպանության դրությանը, լինեն հակահրդեհային միջոցառումների տարածողները և հակահրդեհային պըռպագանդ մղեն մանուկների և մեծահասակների մեջ։

Պիոներական կազմակերպությունները պետք ե նույնպես լինեն նախաձեռնողներ՝ տեղական կամավորական հրդեհաշեջդրուժինաներին կից պատանի հրդեհաշեջների ջոկատներ կազմակերպելու մեջ։ Այնտեղ, վորտեղ այդպիսի ջոկատներ ստեղծված են, պիոներները պետք ե լինեն նրանց առաջավոր մասնակցողները։

Պիոներական կազմակերպությունները ճամբարներում պետք կապվեն գյուղական կամավորական հրդեհաշեջդրուժինաների հետ, նրանց հետ միատեղ պարապմունքներ ու մանյովրաներ ունենան հրդեհաշեջման գործից, ուսումնասիրեն հրդեհաշեջման տեխնիկան ու տակտիկան և

կիրառեն հրդեհների կանխիչ միջոցներ:
Հատուկ ուշադրություն պետք են վի-
րել մանուկների մեջ մղած հակահրդե-
հալին պրոպագանդին: Մանուկները հա-
ճախ լինում են հրդեհների պատճառը,
ակամա հրդեհիչներ: Հարկավոր են բացա-
տրական տշխատանք տանել մանուկների
մեջ՝ կրակի հետ անփույթ և չարաճնի վե-
րաբերմունքի կորստաբեր հետվանքի մա-
սին:

Յուրաքանչյուր պիոներ պետք են գրա-
դեալինի հրդեհալին տեսակետից:

Յուրաքանչյուր պիոներ պետք են մաս-
նակցի հրդեհալին ճակատի հարձակմանը:

Կոնֆերանսը խնդրեց «Պիոներսկալա Պրավդա»
թերթի խմբագրությանը՝ կամպանիա սկսել Խ.Ս.Հ.Մ.
պիոներական կազմակերպությունների կողմից լերկրի
հրդեհալին պաշտպանության ամրացմանը մասնա-
կցելու համար: Կոնֆերանսը դիմեց պատանի պիոներ-
ների Մոսկվայի ըլուրոյին, խնդրելով տաք Մոսկվայի
մարզի պիոներական կազմակերպություններին ցուցում-
ներ այն մասին, վոր անհրաժեշտ ե պիոներների մաս-
նակցությունը հակահրդեհալին արշավում:

Կոնֆերանսը կոչ արեց Խ.Ս.Հ.Մ. բոլոր պիոներա-
բական կազմակերպություններին՝ ակտիվ մասնակ-
ցություն ցույց տալ լերկրի հրդեհալին պաշտպանու-
թյան ամրացման աջակցությանը, հակահրդեհալին
մասնական պրոպագանդին՝ թե մանուկների և թե
մեծահասակների մեջ և ոգնել կոլխոզներին ու գլուղե-
րին, վորտեղ պետք են ստեղծվի մարտ ևնակ հրդե-

հային պաշտպանություն։ Կոնֆերանսը հավաստիաց-
ը եց հրդեհային պաշտպանության Վարչությանը, վոր
պիոներական կաղաքակերպությունները կելնեն հակա-
հրդեհային արշավի, պայքար կմղեն հրդեհների դեմ,
վորոնք արգելակ են հանդիսանում յերկրի սոցիալիս-
տական շինարարությանը և ձախողութ են ինդուստ-
րացումն ու կոլեկտիվացումը։

ՈՎ ԱՇԽԱՏՈՒՄ Ե ՀՆԴԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ, ՆԱ ԴԵՄ Ե ՀՐԴԵԼՆԵՐԻՆ

Պետք ե հուսալ, վոր և՝ պիոներական կազմակերպու-
թյունները, և՝ ամբողջ գովրոցական հասարակայնու-
թյունը ջերմորեն կարձագանգեն պիոներական այդ կոն-
ֆերանսի կոչին, վորն իրոք պիոներ ե հանդիսացել
նոր գործում, այն ե՝ հրդեհների դեմ մղվելիք կռվում։

Պիոներների ու դպրոցական աշակերտության ծա-
նոթացումը հրդեհային տեխնիկային, մանուկների
հրդեհային լուսավորությունը կտա չտեսնված արդյունք-
ներ։ Տասնյակ ու հարյուրավոր մանուկներ՝ սոցիա-
լիզմի յերկրի ապագա քաղաքացիներ, հետաքրքրվե-
լով հրդեհային տեխնիկայով, կգան հրդեհային տեխ-
նիկումներն ու ԲՏՈՒՀ-երը (բարձրագույն տեխնիկական
ուսումնական հիմնարկներ) իսկ հազարավոր ապագա
բանվորներ, ճարտարապետներ, գյուղատնտեսներ
բժիշկներ, արհեստավորներ ու մանկավարժներ ման-
կական հասակից կիմանան հրդեհների դեմ պայքարելու
տեխնիկական ու պրոֆիլակտիկ (կանխիչ) միջոցնե-
ները։

Անհրաժեշտ ե այդ գործը դնել խիստ զիտական-

դաստիրակչական հիմքերի վրա և աշխատել, վոր մեր փոխորդի հրդեհային տեխնիկական լուսավորությունը մտնի արտադրական-տեխնիկական արշավի խնդիրների մեջ:

«Յաբրիկին ու գործարանին կից տեխնիկական ջոկատն ու գոլոցը, — ասում են իրենց դիմումի մեջ Ժ.Տ.Խ., ՀԱՄԿԽ, Լուսադողկոմատը, Համլէլեմի ենտեկոմը և մանկական կոմունիստական կազմակերպության կենտրոնական բարուրոն, — ռազմական պիոներական կազմակերպությունն ու Միության ամբողջ մանկական կոմունիստական կազմակերպությունը պետք եղանական արդյունաբերական տեսական կազմակերպությունը»:

Հականրդեհային ճակատը վերջին տեղը չի գրավում մեր ժողովրդական տնտեսության կյանքում։ Ընդհանուր տեխնիկական հետամնացության, անկուլտուրականության, ալիոհոլիզմի ու ճանապարհների բացակալության հետ միասին, ցարիզմը մեղ ժառանգություն է թողել նաև հրդեհներից քայլայումը։ Վերածելով մեր յերկիրը սոցիակիստական պայծառ ու առողջերի, մենք չենք կարող մեր ճանապարհին հանդուրժել անդրագիտ ու անկուլտուրական Ռուսաստանի ժառանգությունը՝ հրդեհների համաճարակը։

Խորհրդային ամբողջ մանկությունը պետք է լսի հրդեհաշնչների կոչը՝

— Կազմակերպվեց հրդեհների դեմ պայքարելու համար։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



(074)

A 1
4301

— Աղելի մեծ ուշագրություն մտ
հրդեհահին շաբժմանը .

— Արշավի լենել հրդեհային բարեկե-
ցության ու հրակայուն սոցիալիստական
շինարարության համար:

— Ով աշխատում է հնգամյակի համար
նա դեմք հրդեհներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Մոքիլիզացիայի յինթարկենք մանկական ակ-	
տիվությունը	3
Յերեխաները մեր ողնականերն են	7
Հրդեհային վտանգի նշանարարները	10
Վերացնենք հրդեհայրն անգրստիառությունը .	13
Հրձիգ յերեխաները	18
Հակահրդեհային արշավը զեպի գյուղ	19
Վհչ մի հրդեհ մեր տանը	22
Տալ «Պատանի հրդեհաշեջների տասնյակ խըմ	
բակներ	24
Պահպանենք հնգամյակը հրդեհներից	30
Ով աշխատում է հնգամյակի համար, նա դեմք հրդեհներին	34

115. Տ. 111. թ.

Ա. 1988 կ.

